

գիտութիւն կը սորվէր : Հոս այս երկու երևելի գերմանացիները առաջին անգամ զիրար տեսան , և իրարու հետ ընտանեցան : Աեթէ , որ Հէրտէրէն շատ օգտուեցաւ ու վրան մեծ փոփոխութիւն եղաւ , իր Հէրտէրի հետ ըրած ծանօթութեանն ու ընտանեցութեանը ամէն պարագաները մանրամասնաբար նկարագրեց՝ իր Բանասդեղնունիւն և էրականութիւն , կամ Հանգոյց էնաց ինոց ըսուած գրուածքին մէջ :

կը շարտնակոյի :

### ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Սիսմի տէրութեան ձերմակ փոյին անակնկալ մահը :

Ա երջի ատեններս մէկ կարգէ դուրս դիպուած մը տակնուվրայ ըրաւ բոլոր Աիամի արքունիքը : Խնչպէս որ ծանօթէ արդէն ամենուն՝ Աիամի տէրութեան ժողովուրդը մեծ պատկառանք ունին ձերմակ գունով կենդանիներու վրայ . անանկ որ եթէ յանկարծ իրենց քուրմերէն մէկը ձերմակ աքաղաղ մը կամ ձերմակ շուն մը տեսնէ ձամբան՝ գլուխ բանալով յարգութիւն կու տայ : Խակ ձերմակ փղի՝ ոչ պարզ յարգութիւն մը , այլ ինչուան կրօնական պաշտամունք կը նուիրեն . վասն զի կը կարծեն թէ անոր հոգին՝ մէկ մեծ մարդու կամ կայսեր մը հոգի է որ անոր մարմնոյն մէջ կը հանգչի : Աիամի թափառը պարտաւրուած է միշտ մէկ ձերմակ փիղ մը պահելու , ուսկից կախուած էն թագաւորին կեանքն ալ ու բոլոր թագաւորութեան յաջողութիւնն ալ : Ուսէ որ այս փիղը մեռնելու ըլլայ , ժամանակակից թագաւորը բոլոր իր յարգն ու ազդեցութիւնը կը կորանցընէ , և պէտք է որ երկրորդ տարին ինքն ալ գերեզման մտնէ : Աւստի այս պատճառաւաւ է որ

1 Կեթէի վարքը տես օրագրիս մէջ Հ. Ե. Երես 37 :

փղին առողջութեանը ամենային ինսամք կ'ըլլուի :

Այս փիղը բոլոր տէրութեան մէջ թագաւորէն և թագաժառանգէն ետև ինքը կը սեպուի պատուաւոր և ազնուական : Գեղեցիկ և փառաւոր պալատի մը մէջ է իր բնակութիւնը . ինքն ալ թագաւորին պէս ունի իր պալատականներն ու պաշտօնատէրները , զինուորական անձինքներ , պահապաններ , բժիշկներ , և այլն : Ա երէն 'ի վար հարուստ և սուղ զգեստներով ծածկուած է . վիզն ալ թանձր ոսկիէ վզնոց մը ունի , և ձակտին վրայ պասկ մը՝ անգին ակունքներով ու գոհարներով զարդարուած : Ասկիէ կամ ոսկեզօծ արծըթէ ամանի մէջ զբած կու տան իրեն կերակուրը . և իրեն ուտելիքն են ընդհանրապէս շաքարի եղէզն , անուշահամ պտուղներ , և տեսակ մը ծառի տէրեներ՝ զորն որ մասնաւոր իրեն համար կը տնկեն ու կը ինամեն : Այլոր լուալու կը տանին , անբաւ մարդիկ հետը կ'երթան , առջեւէն ալ երաժիշտներ՝ այլ և այլ նուագարաններ զարնելով . իրեն պաշտօնատէրներէն մէկ խումբն ալ վըրան մեծ ամպհովանիներ կը բռնեն՝ զինքը արևէէն պաշտամնելու համար :

Այս փղին անմիջական պաշտօնատէրները՝ քովէն չեն կրնար բաժնուիլ , մինչեւ որ ինչուան գետին ծուելով՝ իրեն հրաժարական բարեւ չտան : Ի՞սյօ դըբաղդաբար ալ Աիամի հիմակուան փիղը անընտել և այնպիսի գէշ բնաւորութիւն մը ունէր , որ եթէ թագաւորն ալ՝ իրեն պալատականքն ալ չզգուշանային , ինչուան հիմա շատ անգամ զիրենք փորձանքի մէջ ձգած կ'ըլլար :

Այս ձերմակ փիղը որ 111 տարուընէ 'ի վեր Աիամի արքունեաց մէջ էր՝ ամերիկացի մէկ ծեր նաւալվար մը իրեն բժիշկ ունի եղեր , որն որ նաւալվարութեան արուեստը ձգելով Աիամ եկեր և փղին բժիշկն ըլլալու փառաւոր պաշտօնը ձեռք ձգեր էր : Պառլիելմոս Բաքէֆրի , այս էր բժշկին անունը , տասը տարի հոն սրբազն կենդանւոյն ծառայելէն ետև , տեսնելով որ երկրին

մէջ գէշ հիւանդութիւն մը կը տարածի՝ ուզեց թողսւլ քաշուիլ անկէ բայց որովհէտև ոսկի կամ արծաթ դիզած չէր, վասն զի երկրին սովորութեանը համեմատ թէպէտ ուրիշ ընծաներ ալ առնէր՝ բայց ոսկի ու արծաթ ոչ երբէք, և չուզելով ալ պարապ ձեռքով անկէց հեռանալ, մտածեց սաստիկ թմրեցուցիչ ափինն մը տալ փղին, որ արդէն հիւանդ վիճակի մէջ էր, և անոր թմրութեան ատեն վզնոցն ու զըլխուն վրայի պսակը յափշտակելու փախը չիլ: Ուստի գիշեր մը մտածածն 'ի գործ դնելով՝ երբոր տեսաւ որ կենդանին սկսաւ թմրիլ և կ'ուզեր խորունկ քնանալ, սիրտ ըրաւ ու վրան ելելով ու զածները կողապտեց: Ի՞այց հազիւ թէ իր յափշտակութիւնը լմբնցուցեր էր՝ մէյ մըն ալ կենդանին յանկարծ կ'ար.

թըննայ, և պատիճովը մէջքէն բռնած՝ խեղչ Կառլիկելմուը ուժով մը դիմացի պատին կը նետէ, ետքն ալ ոտքին տակն առած՝ ջարդութուրդ կ'ընէ ողորմելի բժիշկը: Ի ստուն երբոր պահապանները ներս կը մտնէն, բժիշկը ձկմուած կը գտնէն. փիղն ալ գետնի վրայ ինկած՝ այսպիսի խորունկ ու մեռածի նման քունի մը մէջ ընկղմած էր, որ իրեն քուրմերը իրար անցնելով՝ ինչուան իրիկուն աշխատելէն ետքը չկրցան դարման մը ընել, և սրբազն կենդանին իրիկուան դէմ մեռաւ: Ի ոլոր թագաւորական պալատը հիմա մեծ սուգի մէջ է, վասն զի այս տարի թագաւորն ալ պիտի թազուի: Ի քդէն սկսան յաջորդ թագաւորին վրայօք խօսակցութիւններն ըլլալ. և ներկայ թագաւորը մեռնելու կը պատրաստուի:

### ԱԾԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



### Դրուան քաղաքը:

Դրուան, Ոտորին Ուն գաւառին գըլխաւոր քաղաքը, Կաղզիոյ բազմամարդ ու երեւելի քաղաքներէն մէկն է: Կեղեցիկ հովտի մը մէջ կը հանգչի, և այն բլուրներն որ իր վրայ կը նային՝ մարդագետիններով կամ մշակութեամբ ծածկուած են. Ուն գետը առատ

բով մէջէն կ'անցնի՝ խել մը կղզիներ ձեւացրնելով. գետեզերքը տեղ մը վառվըռուն կանաչութեամբ, տեղ տեղ ալ աղուոր շնչքերով զարդարուած են. նաւահանգիստը ամէն ազգաց նաւերով լեցուն է. և բոլոր քաղաքին մէջ ամէն տեղ գործունէութիւն մը, առու-